



# ՀՀ կառավարության N 439-Ն որոշում, 8-ը ապրիլի 2010 թվական

## Քաղվածք

### ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ (կրճատումով)

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հանրակրթության պետական չափորոշիչը սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, առավելագույն ծավալը, ըստ կրթական մակարդակների շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, սովորողների գնահատման համակարգը:

V. ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Միջնակարգ կրթության բովանդակային բաղադրիչները որոշակիացվում են ըստ ուսումնական բնագավառների և հանրակրթական դպրոցի աստիճանների՝ հաշվի առնելով սովորողների զարգացման ֆիզիոլոգիական, հոգեբանական և ազգային առանձնահատկությունները:

2. Կարողություններ և հմտություններ Այս բաղադրիչով տրված կարողությունների և հմտությունների ամբողջությունը սովորողին հնարավորություն է ընձեռում գործնականում կիրառել ստացված գիտելիքները, հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները, նպաստում է նրա սոցիալականացմանը:

Չափորոշիչներում առանձնակի կարևորվում են ճանաչողության հետևյալ մեթոդները՝ վերլուծում, մասնավորում, համադրում, վերացարկում, անդրադարձում, մակաձուլ (ինդուկցիա), արտածում (դեդուկցիա), ընդհանրացում, կանխատեսում:

1) Ճանաչողական, տրամաբանական կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է՝ սովորողին ծանոթացնել ճանաչողության մեթոդներին և ձևավորել դրանք գործնականում կիրառելու կարողություններ ու հմտություններ, այդ թվում՝

ա. գիտելիքներ ձեռք բերել՝ զգայության, ընկալման և մտապատկերման միջոցով,

բ. վերլուծել՝ քննարկման, մեկնաբանման, տարանջատման,

համեմատության, խմբավորման միջոցով,

գ. մտահանգումներ անել՝ ամբողջացման, հակադրման, բնութագրման, հիմնավորման, ամփոփման, կշռադատման միջոցով,

դ. ընդհանրացնել և համադրել՝ վերացարկման, գնահատման, արժևորման, փաստարկման, ապացուցման, կանխատեսման, ծրագրման միջոցով,

ե. հիմնախնդիրը դիտարկել տարբեր տեսանկյուններից, ուսումնասիրել դրա լուծման հնարավոր եղանակները և

գտնել լուծումներ,

զ. երևույթների նկատմամբ դրսևորել առողջ հետաքրքրություն և քննադատական մոտեցում,

է. վերլուծել իրավիճակը և կատարել եզրակացություններ,

ը. ինքնուրույն որոշումներ ընդունել և հիմնավորել,

թ. նպատակներ դնել, մշակել դրանց հասնելու ուղիներ և ծրագրել սեփական գործը.

2) հաղորդակցական կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. լսել, ընկալել և համարժեք վերաբերմունք դրսևորել,

բ. բանավիճել, բանավոր և գրավոր տրամաբանված խոսք կառուցել,

գ. ըստ նշանակության և տեղին օգտագործել սովորած տերմինները (եզրերը), հասկացությունները և արտահայտությունները,

դ. հասկանալ և ճիշտ օգտագործել հաղորդակցման ոչ խոսքային միջոցները,

ե. օգտվել ժամանակակից հաղորդակցման տեխնիկական միջոցներից և այլն.

3) համագործակցային կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. աշխատել խմբում, միասնական որոշումներ ընդունել և դրանց համար պատասխանատվություն կրել,

բ. սովորել և սովորեցնել,

գ. դրական հարաբերություններ ստեղծել, դրսևորել առողջ մրցակցություն,

դ. սեփական շահը գիտակցելով՝ ճանաչել և ընդունել ուրիշների շահերը,

ե. բախումային իրավիճակներում հավասարակշռված պահվածք դրսևորել,

զ. ուսման ընթացքում և աշխատանքային հարաբերություններում լինել բարեկիրթ, հարգել գործընկերոջ իրավունքները,

է. գերծ մնալ բարոյական չափանիշներին հակասող նախապաշարումներից, կանխակալ մոտեցումներից,

ը. իրավիճակները դիտարկել և մեկնաբանել այլոց տեսանկյունից և այլն.

4) ստեղծագործական կարողություններ ենթաբաղադրիչը նպատակ ունի զարգացնելու սովորողի ստեղծագործական ընդունակություններն ու երևակայությունը, որպեսզի յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. ստեղծագործաբար կիրառել ձեռք բերած գիտելիքները,

բ. դրսևորել ստեղծագործական երևակայություն,

գ. երևակայել, խորհել և ենթադրություններ անել ապագայի մասին,

դ. ընկալել և ընդունել նյութական և հոգևոր նոր արժեքները:

5) ինքնուրույն գործունեության կարողություններ և հմտություններ ենթաբաղադրիչի նպատակն է, որ ուսումնառության արդյունքում յուրաքանչյուր սովորող կարողանա՝

ա. անաչառ գնահատել սեփական ուժերն ու կարողությունները և ըստ այդմ ծավալել ուսումնական, աշխատանքային գործունեություն,

բ. գիտակցել սեփական գործի կարևորությունը, դրա նկատմամբ պատասխանատվություն և պարտաճանաչություն դրսևորել,

գ. ճիշտ տնօրինել ժամանակը, մշակել և պահպանել աշխատանքի և հանգստի ժամակարգ (ռեժիմ), վերահսկել սեփական վարքը,

դ. խնամել սեփական մարմինը, դրսևորել այն մարզելու կամք,

ե. զբաղվել ինքնադաստիարակությամբ և ինքնակրթությամբ,

զ. կողմնորոշվել տարբեր իրավիճակներում, գնահատել սեփական քայլերը և դրանց հետևանքները:

3. Արժեքային համակարգ

Մույն բաղադրիչով նախատեսված համակարգն արտահայտվում է սովորողի համապատասխան գործողությունների, վերաբերմունքի և վարքի միջոցով:

1) Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

ա. գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,

բ. հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

գ. գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,

դ. գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,

ե. կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, զթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,

զ. կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը,

է. գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ. լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,

ը. գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,

թ. հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,

ժ. անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,

ժա. դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,

ժբ. մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի Հանրապետության պետական  
հանրակրթական ուսումնական հաստատություն>>,  
պետական ոչ առևտրային կազմակերպության  
(կրճատումով)

**42. Դասարանի ղեկավարը (դասղեկը)**

- ա) դաստիարակալական աշխատանք է կատարում՝ իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ,
  - բ) ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնականությունը,
  - գ) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն,
  - դ) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հաստատության տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին
  - ե) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ, հետևում տնային հանձնարարությունների կատարմանը, ուսման և հանգստի կազմակերպմանը,
  - զ) հաստատության մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում վարքի կանոնները կոպտորեն խախտած սովորողի հարցը,
  - է) արգելվում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:
71. Հաստատության մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական պետական չափորոշիչներով որոշվող ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից:

**73. Սովորողն իրավունք ունի՝**

- ա) անվճար ստանալու տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն,
  - բ) անկախ բնակության վայրից սահմանված կարգով ընտրելու հաստատությունը և ուսուցման
  - գ) անվճար օգտվելու հաստատության առանձին ծառայություններից.
  - դ) հաստատությունում յուրացնելու լրացուցիչ վճարովի կրթական ծրագրեր.
  - ե) ազատ արտահայտելու սեփական հայացքներն ու համոզմունքները
  - զ) առանց հիմնական կրթություն ստանալու՝ 16 տարին լրանալուց հետո, ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ, թողնելու ուսումը:
74. Հաստատությանն արգելվում է, առանց ծնողների և սովորողների համաձայնության, սովորողներին ընդգրկել այնպիսի աշխատանքներում, որոնք նախատեսված չեն հանրակրթական ծրագրերով և սույն կանոնադրությամբ:
75. Արգելվում է սովորողների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:
76. Սովորողը պարտավոր է բարեխղճորեն սովորել, խնամքով վերաբերվել հաստատության գույքին, հարգել հաստատության սովորողների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը, պահպանել հաստատության ներքին կարգապահական կանոնները:
77. Հաստատության ներքին կարգապահական կանոնները կոպտորեն խախտելու համար սովորողը նախարարության սահմանած կարգով կարող է հեռացվել հաստատությունից:
78. Ծնողն իրավունք ունի պաշտպանելու երեխայի օրինական շահերն ու իրավունքները, մասնակցելու հաստատության կառավարմանը:

Տեղեկո՞թ՞ՅՈՒՆՆԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻ	2-3
ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	4-9
ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ	10-11
ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ	12
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ և ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ	13
ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ	14
ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԺՎԱՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՎՈՂ, ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏԵՎՈՂ, ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ	15
ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ	16
ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ, ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ	17
ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ	18
ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ	19
ՆՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	20

համար	Աշակերտի Ազգանուն, անուն, հայրանուն	դպրոց ընդունման տարեթիվը, հրաման թիվ	աշակեր- տական շարժի համարը	ծննդյան թիվ	ամիսը	օրը	սեռը	հասակը	քաշը
1	Ավագյան Կարեն Սերոբի	2012թ. №19	157	2005	12	26	ար	1.70	53
2	Ավագյան Սոնա Էդգար	2013թ. №22	178	2007	07	27	իգ	1.56	47
3	Երիցյան Արսեն Գևորգ	2013թ. №22	181	2007	07	22	ար	1.68	81
4	Հարությունյան Հարություն Արսեն	2014թ. №36	197	2006	09	15	ար	1.70	48
5	Հովհաննիսյան Մարգարիտ Սուրեն	2013թ. №22	183	2007	05	27	իգ	1.58	58
6	Հովսեփյան Արման Ավետիս	2013թ. №22	184	2007	05	24	ար	1.70	50
7	Մայիլյան Մանվել Հակոբ	2013թ. №22	187	2007	05	04	ար	1.72	58
8	Մանուկյան Գոռ Արկաղի	2013թ. №22	186	2007	04	18	ար	1.60	50
9	Մանուկյան Մերյոժա Արամ	2013թ. №22	188	2007	10	04	ար	1.70	57
10	Նազարյան Գայանե Նորայր	2013թ. №22	190	2007	12	22	իգ	1.65	42
11	Նազարյան Հովհաննես Արամ	2013թ. №22	189	2007	08	10	ար	1.62	74
12	Նաշիկյան Ազատ Շահեն	2013թ. №22	191	2007	07	06	ար	1.62	55
13	Պետրոսյան Հովհաննես Պետրոս	2013թ. №22	193	2006	12	04	ար	1.70	54

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

համար	հասցեն	Հեռախոսի համարը	Ծնողի (խնամակալի) աշխատանքի վայրը կամ զբաղմունքը	Ընտանիքի սոցիալական վիճակը	ծանոթություն
-------	--------	--------------------	--	----------------------------------	--------------

1	Ագարակ 12փ. 22տ.	094-04-35-46	հողագործ	անբավարար	
2	Ագարակ 8փ. 15տ.	093-65-70-51	ԱԳԼՃԿ հերթապահ պետ	բավարար	
3	Ագարակ 2փ. 1փկդ. 4տ.	098-30-37-72	հողագործ	անապահով	
4	Ագարակ 2փ. 12տ.	096-70-99-09	հողագործ	անապահով	
5	Ագարակ 1փ. 39տ.	093-70-72-62	ԱԳԼՃԿ աշխատող	բավարար	
6	Ագարակ 15փ. 1փկդ. 4տ.	093-99-15-14	ավտոմեխանիկ	բավարար	
7	Ագարակ 3փ. 11տ.	077-58-98-05	Աշտարակ կաթ տեխն.	բավարար	
8	Ագարակ 4փ. 1փկդ. 1տ.	098-67-58-24	հսկիչ	բավարար	
9	Ագարակ 6փ. 16տ.	098-85-88-70	բանվոր	բավարար	
10	Ագարակ 12փ. 1տ.	093-222-346	ուսուցչուհի	անբավարար	
11	Ագարակ 4փ. 7տ.	094-17-20-67	վաճառական	բավարար	
12	Ագարակ 2փ. 23տ.	095-78-64-94	ավտոմեխանիկ	բավարար	
13	Ագարակ 8փ. 21տ.	098-14-92-09	շինարար	բավարար	

**ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)-11-րդ դասարանում սովորում են 13 աշակերտներ՝ 3 աղջիկ, 10 տղա: Երեխաները առողջ են և ունակ, մտածող և համերաշխ: Միմյանց հետ շփվում են և հաղորդակցվում: Աշակերտների մեծ մասը ապրում են ապահով ընտանիքներում; ծնողները երիտասարդ են և հետևողական, օգնում են երեխաներին: Վարքը՝ բավարար է; դժվար դաստիարակվող երեխաներ չկան:-----

- Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

- Ստեղծել առողջ կազմակերպված, ընկերասեր, հոգատար կոլեկտիվ
- Կազմակերպել դասագրքերի

Ընտրել դասարանական ակտիվ

- Հետևել հերթապահություն դասարանում
- Անցկացնել դասղեկի ժամեր
- Ներկայացնել դասարանի կրթադաստիրակչական աշխատանքի համառոտ պլանը
- Սեր առաջացնել ուսման նկատմամբ և գիտակցական վերաբերմունքի դաստիարակում, մտավոր աշխատանքի կուլտուրայի բարձրացում; շարունակել զարգացնել աշակերտների ինքնուրույնությունը և սովորեցնել բարեխղճորեն կատարել հասարակական հանձնարարություններ

### 3. Հայեցի դաստիարակություն

#### 3.1 Հոգևոր դաստիարակություն

Անցկացնել զրույց քրիստոնեության մասին, եկեղեցու և նրա պատմության մասին: Աշակերտների մեջ սերմանել հոգևոր արժեքներ և հասնել նրան, որ գերծ մնան աղանդներից, որոնք վերջին շրջանում լայն տարածում ունեն: Զրուցել եկեղեցիների կարևորության մասին, հաճախակի այցելել գյուղի մատուռ, մասնակցել պատարագի:

#### 3.2 Գեղագիտական դաստիարակություն

Անցնկացնել զրույցներ աշակերտների կեցվածքի, վարքի, կուլտուրայի, վարվեցողության, գեղեցկության, արվեստի մասին:

Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի թատրոն, թանգարաններ, համերգ և այլն:



### 3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Երեխան պետք է գիտակցի, որ հայրենիքի պաշտպանությունը ողջ ժողովրդի պարտքն է: Երեխաների մեջ պետք է ձևավորել մարտական որակներ՝ կամք, արիություն, զգոնություն, տոկանություն և այլն: Անհրաժեշտ է պատմական վեպերի ընթերցում, օրհներգի, զինանշանի, դրոշի մասին իմացություն:

### 3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Երեխան պիտի ապրի ներդաշնակ ֆիզիկական զարգացում, կոփի օրգանիզմը, բարձրացնի աշխատունակությունը, ամրապնդի առողջությունը, մշակի շարժողական հատկություններ, ունենա ներդաշնակ ֆիզիկական զարգացում

### 3.5 Աշխատանքային դաստիարակություն

Երեխայի մեջ զարգացնել սեր ընդհանրապես դեպի աշխանքը՝ զրուցելով հետևյալ թեմաներով: <<Աշխատանքը ազնվացնում է մարդուն>>, <<Ով աշխատի, նա կուտի>>, <<Աշխատող մարդը կհասնի արդյունքի>> և այլն: Մասնակցել շաբաթորյակներին և այլ հասարակական աշխատանքներին:

### 3.6 Բնապահպանական

Երեխան պիտի գիտակցի ու հասկանա բնության դերն ու նշանակությունը իր կյանքում: Ողջ ուս. Տարվա ընթացքում երեխաների մեջ արթնացնել սեր, հոգատարություն, ուշադրություն և խնամք շրջակա միջավայրի, բնության հանդեպ

### 3.7 Դպրոց ընտանիք կապը

Ծնողների միջոցով հայտնաբերել երեխաների դրական և բացասական կողմերը: Ծնողներին ներգրավել դպրոցի կյանքին: Կայուն և ուղղորդված աշխատանքի միջոցով հաստատուն պահել ծնող – ուսուցիչ կապը:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	կատարողներ
	.Գիտելիքի օր . Ապահովել դասագրքերով:	01 սեպտեմբեր	Դասղեկ, դպրոց գրադարանավար
I	.Ընտրել դասարանի ակտիվ՝ ավագ և օգնականներ: .Սահմանել հերթապահություն:	04 սեպտեմբեր 08	դասղեկ աշակերտներ
II	. Կազմակերպչական հարցեր: . Զրույց <<Բոլորն ունեն հավասար իրավունքներ>>	11 սեպտեմբեր 15	դասղեկ աշակերտներ
III	.Զրույց <<Հայաստան, երկիր դրախտավայր >>	18 սեպտեմբեր 22	դասղեկ աշակերտներ
IV	. Զրույց <<Վտանգներ, վնասակար սովորություններ>>	25 Սեպտեմբեր 29	դասղեկ
V	. Զրույց՝ <<Տոնո շնորհավոր, սիրելի ուսուցիչ...>> : Ազարակ գյուղի վերածննդի օր:	02 հոկտեմբեր 06	դասղեկ աշակերտներ դպրոց
VI	.Զրույց <<Հավասարակշռություն>>	09 հոկտեմբեր 13	դասղեկ աշակերտներ

VII	. Ստուգել վարքը բոլոր առարկաների, ժամերի և առաջադիմությունը:	16 հոկտեմբեր 19	դասղեկ դասարան ծնող կոմիտե
VIII	Զրույց՝ նվիրված օտար լեզուներին	30 հոկտեմբեր- նոյեմբեր 03	Դասղեկ
IX	.<<Երկիր, քաղաք, գյուղ>>:	06 նոյեմբեր 10	Դասղեկ աշակերտներ
X	. <<Մարդկային, բարոյական, քաղաքացիական որակներ>>	13 նոյեմբեր 17	դասղեկ աշակերտներ
XI	.<<Պատասխանատվության զգացում>>	20 նոյեմբեր 24	Դասղեկ աշակերտներ
XII	. <<Արտակարգ իրավիճակներ՝ քամիներ, հրդեհներ >>	27 նոյեմբեր- դեկտեմբեր 01	դասղեկ աշակերտներ
XIII	. <<Երկրաշարժը և նրա ավերիչ հետևանքները>>	04-08 Դեկտեմբեր	դասղեկ աշակերտներ
XIV	. Վարքը, առաջադիմությունը, բացակայություններ:	11	Դասղեկ

		դեկտեմբեր . 15	աշակերտներ
XV	. <<Առողջ մարմնում, առողջ հոգի>> <b>1</b> կիսամյակի ամփոփում:	18 դեկտեմբեր 22	դասդեկ
XVI	. Առաջին կիսամյակի արդյունքների վերանայում և քննարկում:	08 հունվար 12	դասդեկ
XVII	. Զրույց <<Հանդուրժողականության սահմանները, ինչը հանդուրժել, ինչը՝ ոչ>>	15 հունվար 19	դասդեկ աշակերտներ
XVIII	. Ուսումնասիրել և կարգավորել սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը: . Վերահսկողություն իրականացնել դասարանի առաջադիմության ուղղությամբ: . Հայտնի մարդկանց կյանքի պատմությունը>>: . <<Տոնդ շնորհավոր, Հայոց բանակ>> պատի թերթի լույս ընծայում:	22 հունվար 26	դասդեկ ուսուցիչներ աշակերտներ
XIX	. <<Հայրենասիրություն, ազգասիրություն, անձնագոհություն>>	29 փետրվար 02	դասդեկ աշակերտներ
XX	. Զրույց <<Իրավախախտում և պատասխանատվություն>>	05-09 Փետրվար	Դասդեկ աշակերտներ
XXI	. Զրույց <<Ազգային տոներ>>: . Ուսումնասիրել ընտանիքում ծնողների և երեխանների	12 փետրվար	Դասդեկ աշակերտներ

	փոխհարաբերությունները:	16	
XXII	.Հետևել երեխաների առողջության պահպանման համար անվտանգության կանոններին: . <<Տակտի զգացողությունը – հասուն լինելու նշան է>>	19 փետրվար 23	դասղեկ աշակերտներ
XXIII	<<Ու՞մ կարող ես դիմել դժվարության պահին>>	26-01 փետրվար	դասղեկ աշակերտներ
XXIV	<<Շնորհավոր տոնդ, մայրի՛ կ>>	04 մարտ 08	դասղեկ աշակերտներ
XXV	<<Եթե ես լինեի>>	11 Մարտ 15	դասղեկ աշակերտներ
XXVI	<<Իմ երկիրը երեկ, այսօր, վաղը>>	18 Մարտ 22	դասղեկ աշակերտներ
XXVII	<<Հայաստանի պատմամշակութային ժառանգությունները>>	01 ապրիլ 05	դասղեկ աշակերտներ
XXVIII	<<Պատասխանատու քաղաքացի>>	08-12ապրիլ	Դասղեկ- աշ-ներ
XXIX	<<Ինչ է արդարությունը>>	15 Ապրիլ	դասղեկ աշակերտներ

		19	
XXX	<<Հայոց եղեռն>>	22 ապրիլ 26	դասղեկ աշակերտներ
XXXI	<<Կեցցե՛ ստեղծարար աշխատանքը >> Մայիսի 1:	29-3 Ապրիլ- մայիս	դասղեկ աշակերտներ
XXXII	<<Աշխատանքը բարեկեցության աղբյուրն է>>	06 Մայիս 10	դասղեկ աշակերտներ
XXXIII	<<Իմ ձեռքբերումները և նվաճումները>>	13 Մայիս 17 17	դասղեկ աշակերտներ

XXXIV	2 կիսամյակի ամփոփում	20 Մայիս 24	դասղեկ աշակերտներ
-------	----------------------	-------------------	----------------------





ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

Անվանումը	Հայոց լեզու			Գրականություն			Ռուսաց լեզու			Գերմաներեն		Հանրահաշիվ			Երկրաչափություն			Աշխարհագրություն			Ֆիզիկա		
	Դաստիարակնական	ստացով	վարձավճար	հանձնեց	ստացով	վարձավճար	հանձնեց	ստացով	վարձավճար	հանձնեց	ստացով	վարձավճար	հանձնեց	ստացով	վարձավճար	հանձնեց	ստացով	վարձավճար	հանձնեց	ստացով	վարձավճար	հանձնեց	
1	+	400		+	400		+	550				+	410		+	430		+	550		+	490	
2	+	400		+	400		+	550				+	410		+	430		+	550		+	490	
3	+	400		+	400		+	550				+	410		+	430		+	550		+	490	
4	+	400		+	400		+	550				+	410		+	430		+	550		+	490	
5	+	400		+	400		+	550				+	410		+	430		+	550		+	490	
6	+	400		+	400		+	550				+	410		+	430		+	550		+	490	
7	+	400		+	400		+	550				+	410		+	430		+	550		+	490	
8	+	400		+	400		+	550				+	410		+	430		+	550		+	490	
9	+	400		+	400		+	550				+	410		+	430		+	550		+	490	
10	+	400		+	400		+	550				+	410		+	430		+	550		+	490	
11	+	400		+	400		+	550				+	410		+	430		+	550		+	490	






**ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ,  
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ**

համար	Նախասիրական-առարկայական խմբակ	Գեղարվեստական Երաժշտական խմբակներ	Մարզական խմբակներ	Այլ խմբակներ
1				
2				
3				
4				
5		Դաշնամուր		
6			Ըմբշամարտ	
7			Ըմբշամարտ	
8			Ըմբշամարտ	
9			Ըմբշամարտ	
10		Պար		
11				
12			Ըմբշամարտ	
13			Ըմբշամարտ	
14				
15				
16				
17				
18				
19				
20				
21				













ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԾՆՈՂԱԿԱՆԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ  
Ծնողկոմիտեի կազմը

Նախագահ՝ Մարտիրոսյան Ալլա – 093-70-72-62  
անդամներ՝ Թադևոսյան Լիանա – 098-67-58-24  
անդամներ՝ Գոնախյան Աննա – 077-58-98-05  
անդամներ՝ Ղազարյան Արուս – 093-99-15-14  
անդամներ՝

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԴԱՍԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Անցկացման օրը	Քննարկվող հարցեր	Ծնողկոմիտեի նիստի համառոտ բովանդակություն	Ծանոթություն
06.09.23	Դասագրքերի վարձավճարների հավաքում:		
	Ընդհանուր կարգապահական և կազմակերպչական հարցեր:		
	Էքսկուրսիաների և միջոցառումների կազմակերպում:		
	Առաջադիմության և անհարգելի բացակայությունների հարցերի քննարկում:		







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (կրճատումով)**

Հոդված 11. Կրթության բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման, նրանց ինքնորոշման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը:

Կրթության բովանդակությունն ապահովում է՝

- 1) սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան.
- 2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը.
- 3) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը.
- 4) հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (կրճատումով)**

ՀՈԴՎԱԾ 4. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2. Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:
4. Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
5. Միջնակարգ կրթությունն պետական ուսումնական հաստատություններում անվճար է:
6. Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 12-ամյա միջնակարգ կրթություն:

ՀՈԴՎԱԾ 5. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Հանրակրթությունը ննպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական զարգացմանը, նրա անձի որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշման և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:
2. Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.
  - 1) հանրակրթական մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.
  - 3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.

4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների, օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը:

ՀՈԴՎԱԾ 20. ՍՈՎՈՐՈՂԻ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:
2. Սովորողն իրավունք ունի՝
  - 1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն:
  - 2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ:
  - 3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնականության բազայից:
  - 4) մասնակցելու ներդրողական և արտադրողական միջոցառումների:
  - 5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը:
  - 6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը:
  - 7) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
  - 8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՐԵՒԱՅՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (կրճատումով)

ՀՈԴՎԱԾ 10. Երեխայի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք:

Երեխայի հայացքները, համոզմունքները և կարծիքը ենթակա են նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրության:

Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ազատորեն արտահայտելու իր կարծիքը, որոնելու, ստանալու և հաղորդելու գաղափարներ ու տեղեկատվություն հաղորդակցության ցանկացած միջոցով:

Երեխայի տեղեկատվություն ստանալու իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով:

Դավանանքի ազատության և համոզմունքների արտահայտման իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, երեխայի առողջության, բարոյական նկարագրի կամ այլ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

Արգելվում է առանց ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնության մինչև 16 տարեկան երեխայի մասնակցությունը կրոնական կազմակերպություններին:

ՀՈԴՎԱԾ 11. Երեխայի կրթության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու և ուսումնական հաստատություն ընտրելու իրավունք:

Պետական համապատասխան մարմինները ստեղծում են անհրաժեշտ պայմաններ երեխայի անհատականության դրսևորման, տաղանդի, մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար՝ հիմնելով հանրակրթական, մասնագիտական դպրոցներ, մարզական, տեխնիկական և մշակութային ստեղծագործական մանկական կենտրոններ և այլն: Պետական համապատասխան մարմինները մշակում և իրականացնում են տաղանդավոր երեխաների հայտնաբերման, նրանց դաստիարակության և կրթության կազմակերպման համապատասխան ծրագրեր:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

ՀՈԴՎԱԾ 20. (կրճատումով) Երեխայի հանգստի իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի հանգստի և ժամանցի, իր տարիքին համապատասխան խաղերին և միջոցառումներին ազատորեն մասնակցելու իրավունք:

ՀՈԴՎԱԾ 22. Երեխայի պատվի և արժանապատվության պաշտպանության իրավունքը

Յուրաքանչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության իրավունք:

Ոչ մի երեխա անձնական, ընտանեկան կյանքի, գրագրության և հեռախոսային խոսակցության գաղտնիության կամ բնակարանի անձեռնմխելիության իր իրավունքներն իրականացնելիս չի կարող ենթարկվել կամայական, ապօրինի միջամտության կամ իր պատվի և արժանապատվության նկատմամբ ոտնձգությունների:

Ուսումնադաստիարակչական հաստատություններում երեխայի ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխարարություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա:

Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

1. <<Ուսումնական հաստատության դաստիարակչական աշխատանքային տարեկան ծրագիր>> մատյանը նախատեսված է դաստիարակչական կողմից դասարանի հետ բազմակողմանի դաստիարակչական աշխատանքների նպատակամղված գործունեությունն, աշակերտների ուսումնառության զարգացման հիմնական ուղենիշները գիտամանկավարժական տեսանկյունից համակարգելու, նախագծելու համար:

2. Դաստիարակչական աշխատանքային տարեկան ծրագիրը կազմելիս նպատակահարմար է հաշվի առնել՝

- դաստիարակչական խնդիրների ճշտությունն ու իրատեսությունը,

- Աշակերտների գործունեության կազմակերպման գույակցվածությունը ուսումնադաստիարակչական աշխատանքների նախագծվելիք գործընթացներում,
- դասավանդող ուսուցիչների, մյուս մանկավարժների ու աշակերտների, մանկավարժների ու ծնողների միասնականությունը,
- ներդասարանական, ներդպրոցական և արտադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ներդաշնակ կապը,
- աշակերտների տարիքային, անհատական առանձնահատկությունները, երեխաների (անհատական և ընդհանուր) դաստիարակվածության մակարդակի ու նրանց կյանքի պայմանների իրատևությունը,
- տարեկան պլան-ծրագրի փոխկապվածությունը և համաձայնեցվածությունը ուսումնական հաստատության մյուս ծրագրերի, պլանների հետ:

Դաստիարակչական աշխատանքների հիմնական խնդիրները պետք է չլինեն ոչ չափից դուրս ընդհանուր, ոչ էլ շատ կադապարված, նեղ, այլ անհրաժեշտ է նկատի ունենալ անձի ձևավորման ամբողջականությունը և դաստիարակության յուրահատկությունները՝ տարիքը, սոցիալական շրջապատը:

Մատյանը հնարավորություն է տալիս դասդեկին, ըստ ուսումնական շաբաթների համակարգելու դաստիարակչական գործընթացը, որը թույլ կտա տեսանելի դաստիարակչական գործընթացը, որը թույլ կտա տեսանելի դարձնելու ոչ միայն կատարվելիք աշխատանքները, այլև դրանց իրագործման ճշգրիտ ուղիները:

Պլան-ծրագրի բաժինների հաջորդականությունը և սերտ շարունակական կապը թույլ կտա տեսնելու աշակերտների մտավոր կարողությունների աստիճանական զարգացումը և վարքի դրական դրսևորումները, ծնող-դպրոց կապը:

- Դասդեկի տարեկան ծրագիր-պլանը համարվում է ուսումնական հաստատության համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագիր-պլանի բաղկացուցիչը:
- Դասդեկի աշխատանքային ծրագիր-պլանը կազմվում է ուսումնական տարին սկսելուց առաջ և ըստ սահմանված կարգի հաստատվում է տնօրենի կողմից:
- 10-րդ և 11-րդ էջերի, <<ստացավ>> և <<հանձնեց>> սյունակներում համառոտագրել ստացվելիք և հանձնված դասագրքերի պիտանելիության գնահատականները գերազանց –Գ, լավ –Լ, բավարար –Բ, անմխիթար –Ա

Ուսումնական տարին ավարտելուց հետո դասդեկը անցած ծրագիր-պլանի վերլուծության հիման վրա կազմում է նորը: Պլան-ծրագիրը դասդեկը պահպանում է իր մոտ մինչև տվյալ դասարանի ուսումնառության աստիճանի՝ I-IV, V-IX, X-XII, ավարտելը: